

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես, [ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՂՄԻ ԱՆՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԸ], [ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ] իրավասու մարմնի անունից հայտարարում եմ, որ իրավասու մարմինը սույնով համաձայնում է պահպանել

*«Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների  
բազմակողմ համաձայնագրի դրույթները,*

այսուհետ՝ «Համաձայնագիր», որը ներկայացված է սույն հայտարարությանը  
կից:

Սույն հայտարարության միջոցով [ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ] իրավասու  
մարմինը պետք է [ԱՄՍԱԹԻՎԸ]-ից համարվի Համաձայնագիրը ստորագրող կողմ:  
Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի [ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ] իրավասու  
մարմնի նկատմամբ՝ համաձայն դրա 8-րդ բաժնի:

Ստորագրված է [ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՎԱՅՐԸ]-ում [ԱՄՍԱԹԻՎԸ]-ին

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

**«ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ**

Քանի որ «Ըստ երկրների զեկույցների փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») ստորագրող կողմերի պետությունները «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի կամ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի արձանագրությամբ փոփոխված կոնվենցիայի (այսուհետ՝ «Կոնվենցիա») կողմեր են կամ դրանցով նախատեսված տարածքներ են կամ ստորագրել են կամ հայտնել են Կոնվենցիան ստորագրելու մտադրություն եւ ընդունել են, որ Կոնվենցիան պետք է նրանց համար ուժի մեջ լինի եւ գործի՝ մինչեւ ըստ երկրների (ԸԵ) զեկույցների ավտոմատ փոխանակում տեղի ունենալը.

Քանի որ Կոնվենցիան ստորագրած կամ ստորագրելու մտադրություն հայտնած երկիրը սույն համաձայնագրի 1-ին բաժնում սահմանված կարգով կդառնա պետություն միայն այն դեպքում, երբ այն դառնա Կոնվենցիայի կողմ.

Քանի որ պետությունները ցանկանում են բարձրացնել միջազգային հարկային թափանցիկությունը եւ բարելավել իրենց համապատասխան հարկային մարմինների մատչելիությունը եկամտի գլոբալ բաշխման, վճարված հարկերի եւ հարկային իրավագործությունների շարքում տնտեսական գործունեության տեղակայման որոշակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններին, որտեղ Բազմազգ ձեռնարկությունների (ԲԱԶ) խմբերը գործում են ԸԵ տարեկան զեկույցների ավտոմատ փոխանակման միջոցով՝ նպատակ ունենալով գնահատելու բարձր տրանսֆերային գնագոյացման ռիսկերը եւ բազայի քայքայման եւ շահույթի տեղափոխման հետ կապված այլ ռիսկեր, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, տնտեսական եւ վիճակագրական վերլուծությունների համար.

Քանի որ համապատասխան պետությունների օրենքներով ԲԱԶ-ի խմբի

հաշվետվություն ներկայացնող սուբյեկտից պահանջվում կամ ակնկալվում է, որ կպահանջվի ամեն տարի ներկայացնել ԸԵ զեկույց.

Քանի որ նախատեսված է, որ ԸԵ զեկույցը պետք է լինի եռաստիճան կառույցի մի մաս՝ զլոբալ գլխավոր նիշքի եւ տեղական նիշքի հետ միասին, որոնք միասին ներկայացնում են ստանդարտացված մոտեցում տրանսֆերային գնագոյացման փաստաթղթերի նկատմամբ, որոնք հարկային մարմիններին կտրամադրեն համապատասխան եւ հավաստի տեղեկություններ՝ արդյունավետ եւ հավաստի տրանսֆերային գնագոյացման ռիսկերի գնահատման վերլուծություն կատարելու համար.

Քանի որ Կոնվենցիայի III գլխով թույլատրվում է հարկային նպատակներով տեղեկությունների փոխանակումը, այդ թվում՝ տեղեկությունների ավտոմատացված փոխանակումը, եւ պետությունների իրավասու մարմիններին թույլատրվում է համաձայնեցնել այդ ավտոմատ փոխանակման շրջանակը եւ եղանակները.

Քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ երկու կամ ավելի Կողմեր կարող են փոխհամաձայնության գալ տեղեկությունները ավտոմատ ձեւով փոխանակելու վերաբերյալ, թեեւ իրավասու մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակումը կլինի երկկողմանի հիմքով.

Քանի որ պետությունները կունենան կամ ակնկալվում է, որ մինչեւ ԸԵ զեկույցների առաջին փոխանակումը կունենան i) պատշաճ երաշխիքներ՝ ապահովելու, որ սույն Համաձայնագրի համաձայն ստացված տեղեկությունները մնան գաղտնի եւ օգտագործվեն բարձր տրանսֆերային գնագոյացման ռիսկերի ու բազայի քայքայման եւ շահույթի տեղափոխման հետ կապված այլ ռիսկերի գնահատման նպատակով, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, տնտեսական եւ վիճակագրական վերլուծությունների համար՝ սույն համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան, ii) արդյունավետ փոխանակման հարաբերությունների ենթակառուցվածք (այդ թվում՝ տեղեկությունների ժամանակին, ճշգրիտ եւ գաղտնի փոխանակումն ապահովելու

համար սահմանված ընթացակարգեր, արդյունավետ ու հուսալի հաղորդակցություն եւ փոխանակման կամ փոխանակման հարցումների վերաբերյալ հարցերն ու մտահոգություններն արագորեն լուծելու եւ սույն Համաձայնագրի 4-րդ բաժնի դրույթները կառավարելու հնարավորություններ) եւ  
iii) անհրաժեշտ օրենսդրություն, որով հաշվետվություն ներկայացնող սուբյեկտներից պահանջվում է ներկայացնել ԸԵ զեկույց.

Քանի որ պետությունները պարտավորվում են քննարկումներ իրականացնել՝ անցանկալի տնտեսական արդյունքների դեպքերը լուծելու նպատակով, այդ թվում՝ անհատական ձեռնարկատիրական գործունեությունների համար՝ համաձայն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 2-րդ պարբերության, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի 6-րդ բաժնի 1-ին պարբերության.

Քանի որ փոխհամաձայնության ընթացակարգերը, օրինակ՝ Իրավասու մարմինների պետությունների միջեւ կնքված՝ կրկնակի հարկման մասին կոնվենցիայի հիման վրա, շարունակում են կիրառելի լինել այն դեպքերում, երբ ԸԵ զեկույցը փոխանակվել է սույն Համաձայնագրի հիման վրա.

Քանի որ պետությունների իրավասու մարմինները մտադիր են կնքել սույն Համաձայնագիրը՝ չխախտելով ազգային օրենսդրական ընթացակարգերը (առկայության դեպքում) եւ կատարելով Կոնվենցիայով նախատեսված՝ գաղտնիության եւ պաշտպանության այլ եղանակների վերաբերյալ դրույթները, այդ թվում՝ դրա համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները.

Հետեւաբար, իրավասու մարմինները համաձայնեցին հետեւյալի մասին.

## **ԲԱԺԻՆ 1**

### ***Սահմանումները***

1. Սույն Համաձայնագրի նպատակներով՝ հետեւյալ եզրույթներն ունեն հետեւյալ նշանակությունները.

ա. **«պետություն»** եզրույթը նշանակում է երկիր կամ տարածք, որի համար Կոնվենցիան գտնվում է ուժի եւ գործողության մեջ՝ 28-րդ հոդվածին համապատասխան այն վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու միջոցով կամ, 29-րդ հոդվածի համաձայն, գործողության աշխարհագրական ոլորտը ընդլայնելու միջոցով, եւ որը սույն Համաձայնագիրը ստորագրող կողմ է,

բ. **«իրավասու մարմին»** եզրույթը յուրաքանչյուր համապատասխան պետության համար նշանակում է՝ Կոնվենցիայի «Բ» հավելվածում թվարկված անձինք եւ մարմինները,

գ. **«խումբ»** եզրույթը նշանակում է սեփականության կամ վերահսկողության միջոցով փոխկապակցված ձեռնարկությունների հավաքածու, որից կա՛մ պահանջվում է պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ ֆինանսական հաշվետվություն ներկայացնելու նպատակներով՝ հաշվապահական հաշվառման կիրառելի սկզբունքների համաձայն, կա՛մ դա կպահանջվի, եթե ձեռնարկություններից որեւէ մեկում բաժնեմասնակցության տոկոսները վաճառվեն արժեթղթերի հրապարակային բորսայում.

դ. **«Բազմազգ ձեռնարկությունների (ԲԱՁ) խումբ»** եզրույթը նշանակում է ցանկացած խումբ, որը i) ներառում է երկու կամ ավելի ձեռնարկություններ, որոնց հարկային ռեզիդենտությունը տարբեր պետությունների տարածքում է, կամ ներառում է ձեռնարկություն, որը հարկային նպատակներով ռեզիդենտ է մեկ պետության տարածքում եւ ենթակա է հարկման մեկ այլ պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մասով, եւ ii) բացառված ԲԱՁ խումբ չէ.

ե. **«բացառված ԲԱՁ խումբ»** եզրույթը նշանակում է խումբ, որից չի պահանջվում ներկայացնել ԸԵ զեկույց այն հիմքով, որ խմբի տարեկան համախմբված խմբի եկամուտը հաշվետու հարկաբյուջետային տարվան անմիջապես նախորդող հարկաբյուջետային տարվա ընթացքում, ինչպես արտացոլված է այդ նախորդ հարկաբյուջետային տարվա իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում, ցածր է պետության կողմից ներպետական

օրենսդրությամբ սահմանված շեմից եւ համապատասխանում է 2015 թվականի զեկույցին՝ դրանով նախատեսված 2020 թվականի վերանայումից հետո հնարավոր փոփոխություններով,

զ. **«բաղկացուցիչ սուբյեկտ»** եզրույթը նշանակում է i) ԲԱԶ խմբի ցանկացած առանձին ձեռնարկատիրական սուբյեկտ, որը ֆինանսական հաշվետվություն ներկայացնելու նպատակներով ներառված է համախմբված ֆինանսական հաշվետվություններում կամ կներառվի որպես այդպիսին, եթե ԲԱԶ խմբի այդ ձեռնարկատիրական սուբյեկտների բաժնեմասնակցության տոկոսները վաճառվեն արժեթղթերի հրապարակային բորսայում, ii) ցանկացած առանձին ձեռնարկատիրական սուբյեկտ, որը բացառված է ԲԱԶ խմբերի համախմբված ֆինանսական հաշվետվություններից՝ բացառապես չափի կամ նյութականության հիմքերով, եւ iii) ԲԱԶ խմբի ցանկացած առանձին ձեռնարկատիրական սուբյեկտի որեւէ մշտական հաստատություն, որը ներառված է վերոնշյալ «i» կամ «ii» կետերում, պայմանով, որ ձեռնարկատիրական սուբյեկտն այդ մշտական հաստատության համար առանձին ֆինանսական հաշվետվություն պատրաստի՝ ֆինանսական հաշվետվություն ներկայացնելու, կարգավորման, հարկային հաշվետվությունների ներկայացման կամ ներքին կառավարման վերահսկողության նպատակներով,

է. **«հաշվետու մարմին»** եզրույթը նշանակում է բաղկացուցիչ սուբյեկտ, որն իր հարկային ռեզիդենտության պետության ներպետական օրենսդրության ուժով ներկայացնում է ԸԵ զեկույցը՝ ԲԱԶ խմբի անունից այն ներկայացնելու իր իրավասության սահմաններում,

ը. **«Ըստ երկրների զեկույց»** եզրույթը նշանակում է ըստ երկրների զեկույց, որը պետք է տարեկան կտրվածքով ներկայացվի հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի կողմից՝ համաձայն դրա հարկային ռեզիդենտության պետության օրենքների եւ այն տեղեկությունների, որոնք պահանջվում է հաղորդել այդ օրենքների համաձայն՝ ներառելով այն կետերը եւ արտացոլելով այն ձեւաչափը, որը սահմանված է 2015 թվականի՝ դրանով նախատեսված 2020 թվականի վերանայումից հետո հնարավոր փոփոխություններով,

թ. **«2015 թվականի զեկույց»** եզրույթը նշանակում է «Տրանսֆերային

գնագոյացման փաստաթղթավորում եւ ըստ երկրների զեկուցում» վերտառությամբ համախմբված զեկույց՝ «Բազային քայքայման եւ շահույթի փոփոխման մասին» ՏՀԶԿ/Մեծ քսանյակ գործողությունների ծրագրի 13-րդ գործողության վերաբերյալ,

Ժ. **«համակարգող մարմին»** եզրույթը նշանակում է Կոնվենցիայի համակարգող մարմին, որը, համաձայն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 3-րդ պարբերության, կազմված է Կոնվենցիայի կողմ հանդիսացող իրավասու մարմինների ներկայացուցիչներից,

Ժա. **«համակարգող մարմնի քարտուղարություն»** եզրույթը նշանակում է ՏՀԶԿ-ի քարտուղարությունը, որն աջակցություն է տրամադրում համակարգող մարմնին,

Ժբ. **«գործող Համաձայնագիր»** եզրույթը ցանկացած երկու իրավասու մարմնի համար նշանակում է, որ երկու իրավասու մարմինները հայտնել են միմյանց հետ տեղեկություններ ավտոմատ փոխանակելու մտադրություն եւ բավարարել են 8-րդ բաժնի 2-րդ պարբերության մեջ սահմանված մյուս պայմանները: Այն իրավասու մարմինների ցանկը, որոնց միջեւ գործում է սույն Համաձայնագիրը, պետք է հրապարակվի ՏՀԶԿ-ի կայքում:

2. Ինչ վերաբերում է պետության իրավասու մարմնի կողմից ցանկացած պահի սույն Համաձայնագրի կիրառմանը, ապա սույն Համաձայնագրում այլ կերպ չսահմանված ցանկացած եզրույթ, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում կամ իրավասու մարմիններն ընդհանուր նշանակության մասով համաձայնության չեն եկել (ներպետական օրենսդրությամբ թույլատրված կարգով), ունեն այն նշանակությունը, որն այն ունի տվյալ պահին՝ համաձայն սույն Համաձայնագիրը կիրառող պետության օրենսդրության, այդ պետության կիրառելի հարկային օրենքների համաձայն ցանկացած նշանակություն, որը գերակայում է այդ պետության այլ օրենքների համաձայն եզրույթին տրված նշանակության նկատմամբ:

## **ԲԱԺԻՆ 2**

### ***ԲԱԶ խմբերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը***



1. Կոնվենցիայի 6-րդ, 21-րդ եւ 22-րդ հոդվածների դրույթների համաձայն՝ յուրաքանչյուր իրավասու մարմին ամեն տարի ավտոմատ հիմունքներով կփոխանակի իր պետության տարածքում գտնվող յուրաքանչյուր հաշվետվություն ներկայացնող սուբյեկտից ստացված ԸԵ զեկույցը, որն իր պետության տարածքում հարկային նպատակներով ռեզիդենտ է իր պետության բոլոր այլ այդպիսի իրավասու մարմինների հետ, որոնց համար սույն Համաձայնագիրը գործում է, եւ որտեղ ԸԵ զեկույցում նշված տեղեկությունների հիման վրա հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի ԲԱԶ խմբի մեկ կամ մեկից ավելի բաղկացուցիչ սուբյեկտները կա՛մ ռեզիդենտ են հարկային նպատակներով, կա՛մ ենթակա են հարկման մշտական հաստատության միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մասով:

2. Չնայած նախորդ պարբերությանը՝ պետությունների իրավասու մարմինները, որոնք նշել են, որ պետք է՝ 8-րդ բաժնի 1-ին պարբերության «բ» ենթապարբերության հիման վրա իրենց ներկայացրած ծանուցման համաձայն, նշվեն որպես ոչ փոխադարձության սկզբունքով գործող պետություններ, ԸԵ զեկույցները կուղարկեն համաձայն 1-ին պարբերության, սակայն սույն Համաձայնագրով սահմանված ԸԵ զեկույցներ չեն ստանա: Պետությունների իրավասու մարմինները, որոնք նշված չեն որպես ոչ փոխադարձության սկզբունքով գործող պետություն, ուղարկում եւ ստանում են 1-ին պարբերության մեջ նշված տեղեկությունները: Այնուամենայնիվ, իրավասու մարմիններն այդ տեղեկությունները չեն ուղարկի այն պետությունների իրավասու մարմիններին, որոնք ներառված են ոչ փոխադարձության սկզբունքով գործող պետությունների վերոնշյալ ցանկում:

### **ԲԱԺԻՆ 3**

#### ***Տեղեկությունների փոխանակման ժամանակը եւ եղանակը***

1. 2-րդ բաժնում նշված տեղեկությունների փոխանակման նպատակներով՝ կնշվի ԸԵ զեկույցում ներառված գումարների արժույթը:

2. Ինչ վերաբերում է 2-րդ բաժնի 1-ին պարբերությանը, ապա ԸԵ զեկույցը նախ պետք է փոխանակվի ԲԱԶ խմբի հարկաբյուջետային տարվա մասով, որն սկսվում է իրավասու մարմնի կողմից 8-րդ բաժնի 1-ին պարբերության «ա» ենթապարբերության համաձայն ներկայացված ծանուցման մեջ նշված օրվանից կամ դրանից հետո, հնարավորինս շուտ եւ ոչ ուշ, քան այդ հարկաբյուջետային տարվա վերջին օրվանից 18 ամիս հետո: Չնայած վերոնշյալին՝ ԸԵ զեկույցը պահանջվում է փոխանակել, եթե միայն սույն Համաձայնագիրը գործում է երկու իրավասու մարմինների համար էլ, եւ նրանց համապատասխան պետություններն ունեն գործող օրենսդրություն, որով պահանջվում է ԸԵ զեկույցները ներկայացնել այն հարկաբյուջետային տարվա մասով, որին վերաբերում է ԸԵ զեկույցը, եւ որը համապատասխանում է 2-րդ բաժնում նախատեսված փոխանակման շրջանակին:

3. Համաձայն 2-րդ պարբերության՝ ԸԵ զեկույցը պետք է փոխանակվի հնարավորինս շուտ եւ ոչ ուշ, քան ԲԱԶ խմբի այն հարկաբյուջետային տարվա վերջին օրվանից 15 ամիս անց, որին վերաբերում է ԸԵ զեկույցը:

4. Իրավասու մարմիններն ԸԵ զեկույցներով ավտոմատ կփոխանակվեն Գծանշումների ընդլայնվող լեզվով միասնական սխեմայի միջոցով:

5. Իրավասու մարմինները կաշխատեն եւ կհամաձայնեցնեն տվյալների էլեկտրոնային փոխանցման մեկ կամ մի քանի մեթոդ, այդ թվում՝ գաղտնագրման չափանիշները՝ ստանդարտացումն առավելագույնի հասցնելու եւ բարդություններն ու ծախսերը նվազագույնի հասցնելու համար, եւ համակարգող մարմնի քարտուղարությանը կծանուցեն այդ ստանդարտացված փոխանցման եւ գաղտնագրման մեթոդների մասին:

#### **ԲԱԺԻՆ 4**

### ***Համագործակցությունը համապատասխանության եւ կիրարկման մասով***

Իրավասու մարմինը կծանուցի մյուս իրավասու մարմին, երբ առաջինը նշված իրավասու մարմինը հաշվետվություն ներկայացնող այն սուբյեկտի առնչությամբ, որը հարկային նպատակներով ռեզիդենտ է մյուս իրավասու մարմնի տարածքում, հիմքեր ունենա կարծելու, որ սխալը կարող է հանգեցրած լինել տեղեկությունների սխալ կամ թերի հաղորդման կամ, որ առկա է հաշվետվություն ներկայացնող սուբյեկտի կողմից ԸԵ զեկույց ներկայացնելու իր պարտավորության չկատարում: Ծանուցում ստացած իրավասու մարմինը կձեռնարկի իր ներպետական օրենսդրությամբ հասանելի համապատասխան միջոցները՝ ծանուցման մեջ նկարագրված սխալները կամ չկատարումները վերացնելու համար:

## **ԲԱԺԻՆ 5**

### ***Գաղտնիությունը, տվյալների պաշտպանությունը եւ պատշաճ օգտագործումը***

1. Փոխանակված բոլոր տեղեկությունների վրա տարածվում են գաղտնիության կանոնները եւ Կոնվենցիայով նախատեսված այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները:

2. Ի հավելումն 1-ին պարբերության մեջ առկա սահմանափակումների՝ տեղեկությունների օգտագործումը հետագայում կսահմանափակվի սույն պարբերության մեջ նկարագրված թույլատրելի օգտագործման դեպքերով: Մասնավորապես, ԸԵ զեկույցի միջոցով ստացված տեղեկությունները կօգտագործվեն բարձր տրանսֆերային գնագոյացման, բազայի քայքայման եւ շահույթի տեղափոխման հետ կապված ռիսկերը գնահատելու համար եւ, անհրաժեշտության դեպքում, տնտեսական եւ վիճակագրական վերլուծության

համար: Տեղեկությունները չեն օգտագործվի որպես գործառնության համադրական վերլուծության եւ համադրելիության համադրական վերլուծության հիման վրա առանձին գործարքների տրանսֆերային գնագոյացման եւ գների մանրամասն վերլուծությանը փոխարինող: Ընդունված է, որ ԸԵ գեկույցում պարունակվող տեղեկություններն ինքնին վերջնական ապացույց չեն առ այն, որ տրանսֆերային գները պատշաճ են կամ պատշաճ չեն, ուստի՝ տրանսֆերային գնագոյացման ճշգրտումները չեն հիմնվի ԸԵ գեկույցի վրա: Տեղական հարկային մարմինների կողմից սույն պարբերությանը հակասող ոչ պատշաճ ճշգրտումները կընդունվեն իրավասու մարմնի ցանկացած վարույթ: Չնայած վերոգրյալին՝ ԸԵ գեկույցը ԲԱԶ խմբի տրանսֆերային գնագոյացման ճշգրտումների մասին հետագա հարցումներ կատարելու համար կամ հարկային աուդիտի ընթացքում այլ հարկային հարցերով որպես հիմք օգտագործելու որեւէ արգելք չկա, արդյունքում կարող են կատարվել բաղկացուցիչ սուբյեկտի հարկվող եկամուտի մասով համապատասխան ճշգրտումներ:

3. Այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ, իրավասու մարմինն անհապաղ կձանուցի համակարգող մարմնի քարտուղարությանը սույն բաժնի 1-ին եւ 2-րդ պարբերությունների պահանջները չկատարելու ցանկացած դեպքի, այդ թվում՝ ցանկացած պաշտպանության միջոցի, ինչպես նաեւ վերոնշյալ պարբերությունների պահանջները չկատարելու մասով ձեռնարկված ցանկացած միջոցի մասին: Համակարգող մարմնի քարտուղարությունը կտեղեկացնի այն բոլոր իրավասու մարմիններին, որոնց համար սույն Համաձայնագիրն առաջին նշված իրավասու մարմնի հետ գործող Համաձայնագիր է:

## **ԲԱԺԻՆ 6**

### ***Խորհրդակցությունները***

1. Այն դեպքում, երբ բաղկացուցիչ սուբյեկտի հարկվող եկամտի

Ճշգրտումն ԸԵ զեկույցի տվյալների վրա հիմնված հետագա հարցումների արդյունքում հանգեցնում է անցանկալի տնտեսական արդյունքների, ներառյալ, եթե նման դեպքեր առաջանան կոնկրետ ձեռնարկատիրության համար, ապա այն պետության իրավասու մարմինները, որտեղ ռեզիդենտ են ազդակիր բաղկացուցիչ սուբյեկտները, պետք է խորհրդակցեն միմյանց հետ եւ քննարկում անցկացնեն՝ գործը լուծելու նպատակով:

2. Սույն Համաձայնագրի կիրարկման կամ մեկնաբանության հետ կապված որեւէ խնդիր առաջանալու դեպքում իրավասու մարմինը կարող է խնդրել խորհրդակցություն անցկացնել իրավասու մարմիններից մեկի կամ մի քանիսի հետ՝ սույն Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով պատշաճ միջոցառումներ մշակելու համար: Մասնավորապես, իրավասու մարմինը խորհրդակցում է մյուս իրավասու մարմնի հետ՝ նախքան առաջինը նշված իրավասու մարմինը կորոշի, որ առկա է ԸԵ զեկույցների՝ մյուս իրավասու մարմնի հետ փոխանակման համակարգային խախտում: Եթե առաջին նշված իրավասու մարմինն այդպիսի որոշում է կայացնում, ապա այն պետք է ծանուցի համակարգող մարմնի քարտուղարությանը, որը շահագրգիռ մյուս իրավասու մարմնին տեղեկացնելուց հետո այդ մասին կծանուցի բոլոր իրավասու մարմիններին: Այնքանով, որքանով թույլատրվում է կիրառելի իրավունքով, իրավասու մարմիններից յուրաքանչյուրը կարող է եւ, ցանկության դեպքում, համակարգող մարմնի քարտուղարության միջոցով ներգրավում է այլ իրավասու մարմինների, որոնց համար գործում է սույն Համաձայնագիրը՝ նպատակ ունենալով գտնելու խնդրի ընդունելի լուծում:

3. Այն իրավասու մարմինը, որը 2-րդ պարբերության համաձայն խնդրել է խորհրդակցություններ անցկացնել, անհրաժեշտության դեպքում ապահովում է, որ համակարգող մարմնի քարտուղարությանը ծանուցվի ցանկացած արված եզրակացության եւ մշակված ցանկացած միջոցառման, այդ թվում՝ այդպիսի եզրակացությունների կամ միջոցառումների բացակայության մասին, իսկ համակարգող մարմնի քարտուղարությունն այդպիսի եզրակացությունների կամ մշակված միջոցառումների մասին կծանուցի բոլոր իրավասու մարմիններին,

նույնիսկ այն իրավասու մարմիններին, որոնք չեն մասնակցել խորհրդակցություններին: Հարկ վճարողին հատուկ տեղեկությունները, այդ թվում՝ այն տեղեկությունները, որոնք կբացահայտեն տվյալ հարկ վճարողի ինքնությունը, չպետք է տրամադրվեն:

## **ԲԱԺԻՆ 7**

### ***Փոփոխությունները***

Սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ կատարվել այն բոլոր իրավասու մարմինների գրավոր համաձայնությամբ ձեռք բերված ընդհանուր համաձայնությամբ, որոնք գործողության մեջ են դրել Համաձայնագիրը: Այլ բան համաձայնեցված չլինելու դեպքում այդ փոփոխությունն ուժի մեջ է մտնում այդ գրավոր համաձայնության վերջին ստորագրման օրվանից հետո մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

## **ԲԱԺԻՆ 8**

### ***Համաձայնագրի գործողության ժամկետը***

1. Իրավասու մարմինը պետք է սույն Համաձայնագրի ստորագրման պահին կամ դրանից հետո հնարավորինս շուտ ծանուցում տրամադրի համակարգող մարմնի քարտուղարությանը՝

ա. այն մասին, որ իր պետությունն ունի գործող անհրաժեշտ օրենքները՝ հաշվետվություն ներկայացնող սուբյեկտներից ԸԵ զեկույցների ներկայացումը պահանջելու համար, եւ որ իր պետությունը կպահանջի ԸԵ զեկույցների ներկայացում հաշվետվություն ներկայացնող սուբյեկտների հարկաբյուջետային տարիների մասով, որոնք սկսվում են ծանուցման մեջ նշված ամսաթվից կամ

դրանից հետո,

բ. որով նշվում է, թե արդյոք պետությունը պետք է ընդգրկվի ոչ փոխադարձության սկզբունքով գործող պետությունների ցանկում,

գ. որով նշվում է տվյալների էլեկտրոնային փոխանցման մեկ կամ մի քանի մեթոդ, այդ թվում՝ գաղտնագրում,

դ. որ այն ունի գործող անհրաժեշտ իրավական դաշտ եւ ենթակառուցվածք՝ Կոնվենցիայի 22-րդ հոդվածի եւ սույն Համաձայնագրի 1-ին պարբերության եւ 5-րդ բաժնի համաձայն անհրաժեշտ գաղտնիություն եւ տվյալների պաշտպանության չափանիշներ, ինչպես նաեւ ԸԵ զեկույցներում նշված տեղեկությունների՝ սույն Համաձայնագրի 5-րդ բաժնի 2-րդ պարբերությամբ նկարագրված կարգով պատշաճ օգտագործումն ապահովելու համար, եւ որպես սույն Համաձայնագրի հավելված կցելով գաղտնիության եւ տվյալների պաշտպանության լրացված հարցաթերթիկը, եւ

ե. որը ներառում է i) այն իրավասու մարմինների պետությունների ցանկը, որոնց մասով այն մտադիր է ուժի մեջ դնել սույն Համաձայնագիրը՝ հետեւելով ուժի մեջ մտնելու ազգային օրենսդրական ընթացակարգերին (առկայության դեպքում), կամ ii) իրավասու մարմնի հայտարարությունն այն մասին, որ այն մտադիր է սույն Համաձայնագիրն ուժի մեջ դնել բոլոր մյուս իրավասու մարմինների հետ, որոնք ծանուցում են ներկայացնում՝ համաձայն 8-րդ բաժնի 1-ին պարբերության «ե» ենթապարբերության:

Իրավասու մարմինները պետք է համակարգող մարմնի քարտուղարությանն անհապաղ ծանուցեն ցանկացած հետագա փոփոխության մասին, որը պետք է կատարվի ծանուցման վերոնշյալ բովանդակության մեջ:

2. Սույն Համաձայնագիրը երկու իրավասու մարմինների միջեւ ուժի մեջ կմտնի հետեւյալ ամսաթվերից ավելի ուշ ամսաթվին՝ i) այն ամսաթվին, երբ երկու իրավասու մարմիններից երկրորդը, 1-ին պարբերության համաձայն, համակարգող մարմնի քարտուղարություն է ուղարկել ծանուցում, որը ներառում է

մյուս իրավասու մարմնի պետությունը՝ 1-ին պարբերության «ե» ենթապարբերության համաձայն, եւ ii) այն ամսաթվին, երբ Կոնվենցիան ուժի մեջ է մտել եւ գործում է երկու պետությունների համար:

3. Համակարգող մարմնի քարտուղարությունը կվարի ցանկ, որը կհրապարակվի այն իրավասու մարմինների՝ ՏՀԶԿ-ի կայքում, որոնք ստորագրել են Համաձայնագիրը, եւ թե որ իրավասու մարմինների միջեւ է սույն Համաձայնագիրն ուժի մեջ: Բացի այդ՝ համակարգող մարմնի քարտուղարությունն իրավասու մարմինների կողմից 1-ին պարբերության «ա» եւ «բ» ենթապարբերությունների համաձայն տրամադրվող տեղեկությունները կհրապարակի ՏՀԶԿ կայքում:

4. 1-ին պարբերության «գ»-«ե» ենթապարբերությունների համաձայն տրամադրված տեղեկությունները համակարգող մարմնի քարտուղարություն ուղարկված գրավոր հարցման հիման վրա հասանելի կդառնան այլ ստորագրող կողմերի:

5. Իրավասու մարմինը կարող է ժամանակավորապես կասեցնել սույն Համաձայնագրի համաձայն կատարվող տեղեկությունների փոխանակումը՝ մեկ այլ իրավասու մարմնի գրավոր ծանուցում ուղարկելով այն մասին, որ պարզել է, որ առկա է կամ առկա է եղել նշված երկրորդ իրավասու մարմնի կողմից սույն Համաձայնագրի պահանջներն էականորեն չկատարելու դեպք: Մինչեւ այդպիսի որոշում կայացնելը՝ նշված առաջին իրավասու մարմինը խորհրդակցում է մյուս իրավասու մարմնի հետ: Սույն պարբերության նպատակներով, պահանջների էական չկատարում նշանակում է սույն Համաձայնագրի 5-րդ բաժնի 1-ին եւ 2-րդ պարբերությունների եւ սույն Համաձայնագրի 6-րդ բաժնի 1-ին պարբերության եւ (կամ) Կոնվենցիայի համապատասխան դրույթների չկատարում, ինչպես նաեւ իրավասու մարմնի կողմից սույն Համաձայնագրով սահմանված կարգով ժամանակին կամ պատշաճ տեղեկություններ չտրամադրվելը: Կասեցումը կունենա անմիջական ազդեցություն եւ կտեւի այնքան ժամանակ, մինչեւ որ նշված երկրորդ իրավասու մարմինը երկու իրավասու մարմինների համար ընդունելի



ձեռով հաստատի, որ որեւէ էական չկատարում չի եղել, կամ որ նշված երկրորդ իրավասու մարմինն ընդունել է համապատասխան միջոցներ, որոնք ուղղված են էական չկատարման վերացմանը: Այնքանով, որքանով թույլատրված է կիրառելի իրավունքով, իրավասու մարմիններից յուրաքանչյուրը կարող է եւ, եթե այդպես է ցանկանում, ապա համակարգող մարմնի քարտուղարության միջոցով ներգրավել այլ իրավասու մարմինների, որոնց համար գործում է սույն Համաձայնագիրը՝ նպատակ ունենալով գտնելու խնդրի ընդունելի լուծում:

6. Իրավասու մարմինը կարող է դադարեցնել իր մասնակցությունը սույն Համաձայնագրին կամ կոնկրետ իրավասու մարմնի մասով՝ համակարգող մարմնի քարտուղարությունն ուղարկելով դադարեցման մասին գրավոր ծանուցում: Այդ դադարեցումն ուժի մեջ է մտնում դադարեցման մասին ծանուցումն ստանալու օրվանից հետո 12-ամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը: Դադարեցման դեպքում սույն Համաձայնագրի շրջանակներում նախկինում ստացված բոլոր տեղեկությունները շարունակում են լինել գաղտնի, եւ դրանց նկատմամբ գործում են Կոնվենցիայի պայմանները:

## **ԲԱԺԻՆ 9**

### ***Համակարգող մարմնի քարտուղարությունը***

Սույն համաձայնագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում համակարգող մարմնի քարտուղարությունը բոլոր իրավասու մարմիններին կտեղեկացնի այն ցանկացած ծանուցման մասին, որն այն ստացել է սույն Համաձայնագրի շրջանակներում, եւ Համաձայնագիրը ստորագրող բոլոր կողմերին կուղարկի ծանուցում, եթե Համաձայնագիրը ստորագրվի նոր Իրավասու մարմնի կողմից:

Կատարված է անգլերենով եւ ֆրանսերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են: